

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՈՍԿՅԱ ԱԴԱՄԱՆԴԱԿՈՒՌ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԴՈԿՏՈՐ ԺՈԶԵ ԴԵ ԱԶԵՐԵԴՈ ՊԵՐԴԻԿԱՈՅԻՆ

Հյուսիսային Ամերիկայի հայոց Կալիֆոռնիայի թեմի նորընտիր առաջնորդ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Վարժապետյանը, Մայր Աթոռից դեպի իր թեմը ճանապարհի վրա, Վեհափառ Հայրապետի հրամանով, կանգ է առնում Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոնում, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիկաոյին պաշտոնապես հանձնելու Ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի ոսկյա ադամանդակուռ շքանշանը։

Սրբազանը դեկտեմբերի 20-ին ժամանում է Լիսաբոն և օդանավակայանում դիմավորվում է պատշաճ հարգանքով՝ որպես Վեհափառ Հայրապետի լիազոր պատվիրակը՝ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հարգանուն երեք անդամների կողմից, գլխավորությամբ պր. Ռոբերտ Կյուլպենկյանի։

Դեկտեմբեր 20-ի երեկոյան ժամը 6-ին Բարգեն սրբազանը այցելում է Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիկաոյին և հանդիսավոր իրադրության մեջ, հոտնկայս, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության անդամներից պր. Լ. Եսայանի, պր. Ռոբերտ Կյուլպենկյանի և հիմնարկության հայկական բաժնի քարտուղար պր. Կորյուն Քեշիշյանի ներկայության, կարդում է Վեհափառ Հայրապետի նոյեմբեր 25 թվակիր սրբատառ կոնդակը և ապա շքանշանը կախում պր. նախագահի կոծքից, որը հարգանքով հեռանում էր Վեհափառ Հայրապետի կոնդակի պորտուգալերեն թարգմանությանը։

Ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի շքանշանը

Ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի ոսկյա ադամանդակուռ շքանշանն ստանալուց հետո դոկտ. Ժոզեն զգացված բառերով իր խորին շնորհակալությունն է հայտնում Վեհափառ Հայրապետին՝ իրեն շնորհված այդ բացառիկ և մեծ պատվի համար և ավելացնում, որ «այս մեծ պատիվը կերթա

առավել չափով հանգուցյալ Մեծ Բարեբարին, ինչպես նաև Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության մյուս անդամներին և ի մասնավորի պր. Գևորգ Նսայանին, որուն կպարտինք մեր հաջողությունը»։

Այնուհետև դոկտ. Ժոզեն ընդունում է բոլոր ներկաների սրտագին շնորհավորությունները։

Դեկտեմբերի 21-ին դոկտ. Ժոզեն կազմակերպում է ընդունելություն ի պատիվ Վեհափառ Հայրապետի լիազոր պատվիրակ գերաշնորհ Տ. Բաբգեն եպիսկոպոսի։

Հանուն Վեհափառ Հայրապետի և Ս. Երուսաղեմի ու Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռների, գերաշնորհ Տ. Բաբգեն եպիսկոպոսը շնորհակալություն է հայտնում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության պր. նախագահին և պատվարժան անդամներին՝ «իրենց հայանպաստ և եկեղեցասեր գործին համար»։

Այնուհետև Վեհափառ Հայրապետի լիազոր պատվիրակը ներկա է լինում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության վարչության երկու նիստերին, որտեղ քննության է առնվում «Հայանպաստ գործի ընդհանուր ծրագիրը»։

Գերաշնորհ Տ. Բաբգեն եպիսկոպոսը դեկտեմբերի 23-ին, լավագույն տպավորություններով, հրաժեշտ է առնում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության պր. նախագահից և վարչության հարգարժան անդամներից՝ շարունակելու համար իր ճանապարհը դեպի իր թեմը՝ Կալիֆոռնիա։

***

Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ոսկյա աղամանդակուռ շքանշանի բնական բարձրությունն է 6 սմ., իսկ լայնությունը՝ 4,5 սմ.։

Շքանշանը ամբողջությամբ ոսկեգույն է։ Հայրապետական թագի, կոնքեռի և ներքևի թվականի ֆոնները կարմիր (գրենադ) էմալ են, եմիփորոնը և արծվի թևերի ներքևի պատերը՝ կապույտ էմալ։ Հայրապետական թագի խաչը և ճակատի մասը ոսկեն շորաական ադամանդ, իսկ կոնքեռի վրա կա 5 ադամանդ։ Եմիփորոնի վրա գրված են Վեհափառ Հայրապետի անվան սկզբնատառերը՝ Վ. Ա.։